ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

Չ.–Թ. ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԻ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սկիզբը՝ նախորդիվ

Դրասխանակերտցու մեծագույն հարգանքն ակնհայտ է նաեւ Սահակ (Սահակ Գ. Զորոփորեցի) հայրապետի նկատմամբ, «որ հայրենեօք էր ի Զորափորոյ յարքունաշէն գեղջէ եւ մայրենեօք ի Մաղազ գաւառէ ի գեղջէ Բերդկաց» (էջ 96)։ Հուզիչ ճակատագիր է վիճակվում այս կաթողիկոսին, որի հայրապետության տարիներին Հայաստանը շարունակում էր մնալ արաբա-բյուզանդական հակամարտության ոլորտում։ Ստեղծված ծանր պայմաններում Սահակ Զորափորցին իրեն դրսեւորում է որպես հայոց հավատքի նախանձախնդիր, հարազատ ժողովրդի խաղաղության ու անվտանգության անձնուրաց պաշտպան։ Հայաստան ներխուժած Աբդլահ անունով ոստիկանը, լինելով, ինչպես գրում է պատմիչը, «այր ժանտ ժպիրհ եւ ապարասան եւ յաւէտ չարաբարոյ, որ զկեղծաւորութիւնն իբրեւ զթոյնս իժի յինքն բունեալ ունէր եւ կալանաւոր կապանօք չարչարէր զիշխանս եւ զազատս աշխարհիս Հայոց, եւ յաւարի առնոյր զկարասի եւ զստացուածս բազմաց» (էջ 96), Սահակ կաթողիկոսին հայոց իշխան Սմբատ Բագրատունու հետ շղթայում եւ տանում է Դամասկոս։ Դրանից հետո էլ խալիֆայի զորականների անլուր վայրագությունները ու ավազակային հարձակումները շարունակվում են, որոնց մեր ժողովուրդը երբեմն հակադարձում է, ըմբոստանում եւ արդար զայրույթով վրեժխնդիր լինում։ Հայերի ապստամբության պատճառով խալիֆան պատժարշավ է ձեռնարկում Հայաստանի վրա՝ սպառնալով հրդեհել, քանդել հայոց եկեղեցիները, կործանել, սրի մատնել ժողովրդին։ Սահակ Զորափորցին, որ այդ ժամանակ, ինչպես վկայում է Հովհաննես

Դրասխանակերտցին, դեռ Դամասկոսում էր, լսելով արաբ զորապետի սպառնալիքների մասին, նրա մոտ գնալու իրավունք է խնդրում՝ հուսալով հաշտության եզրեր գտնել։ Սակայն ճանապարհին՝ Խառանում, նա ծանր հիվանդանում է եւ վախճանվում։ Մահվանից առաջ, սակայն, նա արաբ զորապետին «աղաչալից», «խրատական խօսքերով» մի նամակ է գրում, որտեղ հիշեցնելով «մարմնի սովորական մահը», «դժոխքի խիստ դառնութիւնը», «ինչպէս նաեւ օտար տեղում իր մեռնելը նրա համար որպէս մեղմացնող փաստ բերելով», համոզում-աղաչում է հետ դառնալ չար խորհրդից եւ չկատարել այդ ապիրատ մտադրությունը (էջ 99)։ Եւ ապա հրամայում է, որ իր մեռնելուց հետո այդ հրովարտակը դնեն իր աջ ձեռքում, որպեսզի զորապետը գալով վերցնի իր ձեռքից եւ թերեւս զղջա ու չկատարի իր անօրեն մտադրությունները։ Եւ իսկապես, երբ խալիֆայության ոստիկանը գալիս եւ մոտենում է «Աստծու մարդու դիապատուած մարմնին» եւ նրան ողջունում որպես կենդանի մարդու, «Հոգւոյն ազդումն զձեռն սրբոյն, որ անշնչութեամբն էր խափանեալ՝ շարժեաց ընդդէմ ոստիկանին ի պատճառս աղերսանաց» (էջ 100)։ Աբդլահ ոստիկանը, նախ զարմանալով այս հարաշագործության վրա, որ հավանականորեն ունի բանահյուսական ակունք, կարդում է նամակը, ապա հիանալով կաթողիկոսի կամքի ուժով ու նվիրվածությամբ՝ ներում հայոց նախարարների «հանցանքները», խոստանում կատարել նրա՝ նամակում նշված խնդրանքները՝ կասեցնելով դեպի Հայաստան ձեռնարկվող արշավանքը։ Այստեղ ակնառու է թշնամու ակնածանքը հայրապետի նկատմամբ, որ նույնպես կարելի է դիտարկել որպես կերպարակերտման սկզբունք։ «Այսպիսով,— գրում է Վ. Վարդանյանը,— ծերունազարդ Սահակ Կաթողիկոսը՝ հայրենի երկրի քաղաքական փրկության իրատես առաջնորդը, առ ոչինչ համարելով ամեն տեսակ վտանգներն ու որոգայթները, մեկնեց Խառան, որպեսզի իր հոտին փրկի մահացու հորձանքից... Նա վտանգավոր պահին երկիրը ձերբազերծեց ահավոր վտանգից եւ իր հոգով ու արյունով ապահովեց նրա թեկուզ կարճատեւ, բայց հույժ անհրաժեշտ խաղաղությունը։ Նրա կատարածը հերոսական ինքնազոհություն էր, իր նպատակի ծանրալուծ բեռը կրելու բացառիկ օրինակ»[1]։ Իսկ ահա թե ինչպես է որակում ինքը՝ Դրասխանակերտցին, Սահակ հայրապետի

[1] Վ. Վարդանյան, *Սահակ Զորափորցի՝ նահատակ կաթողիկոսը*, «Էջմիածին», Ը., 2001, էջ 78։

համարձակ ձեռնարկումը. «Եւ այսպէս զմեռելութիւն նորա պատուական արար Աստուած քան զմեր կենդանութիւնս, եւ ի սադրելոյ աղօթից նորա փրկութիւն մեծ ծագեաց աշխարհիս մերում» (էջ 100)։

Ընդգծված կերպար է նաեւ Հովհաննես (Հովհան Գ. Օձնեցի) հայրապետը, որի անվանը Դրասխանակերտցին անմիջապես կցում է «իմաստասէր» պատվանունը[2]։ Պատմիչը, որը, ի դեպ, առաջինն է տեղեկություն հայտնում մեր այս կաթողիկոսի մասին[3], Հովհան Օձնեցուն նկարագրում է թե՛ ներքին եւ թե՛ արտաքին բարեմասնություններով։ Նա ազնվաբարո հոգեւորական է, բանիմաց ու խորագետ, բազմագետ ու բազմահմուտ գիտնական. «...հմուտ եւ տեղեակ գոլով բոլոր քերթողական շարագծաց, մասանց բանի եւ մասնականաց, այլ եւ վարժից սեռից եւ որք ընդ գոյացութեամբ են սեռական տեսակարարութիւնք մինչ ցանհատ վայր, եւ տարբերութեանցն եւս հանգամանաց եւ պատահմանց անջատից եւ անանջատից ոչ անտեղեակ... Սա ամենայն առաքինի քաջողջութեամբ զանձն տուեալ աշխատասիրաբար կրթական ջանիւ զինքն զինէր յերգս հոգեւորս պահօք եւ աղօթիւք եւ ամենագիշեր տքնութեամբ» (էջ 104)։

Հովհաննես «մեծ իմաստասէրը» զուրկ չէ նաեւ արտաքին առաքինություններից, որ, ի տարբերություն նախորդների եւ նրան հաջորդողների, պատմիչը մանրամասնորեն նկարագրում է. նա բարձրահասակ է, թիկնավետ, գեղասքանչ հասակով ու փառահեղ տեսքով, «լաւ գոյն ունեցող»։ Այսօրինակ բնութագիրը, կարծում ենք, ոչ թե կերպարի անհատականացում է հետապնդում, այլ կատարյալի ընդգծում, որ, թերեւս, Դրասխանակերտցին ներբողային չափազանցությամբ է ներկայացնում։

Դրասխանակերտցու հաղորդմամբ՝ Օձնեցին զգեստի տակից ոչ թե բրդյա, այլ այծի մազից գործված կոպիտ ու անտանելի քուրձ էր հագնում, մինչդեռ դրսից զարդարվում էր գունավոր ընտիր նյութից պատրաստված զգեստով։ Նա, ոսկին խարտոցով մանրացնելով ու նրա հետ անուշահոտ խունկեր խառնելով, փչում էր ալեխառն մորուքին, որն իջնում էր մինչեւ նրա զգեստի գրպանները։ Օձնեցու արտաքին նկարագրության մեջ զգալի տեղ գրավող հրաշագործ ու վեհատեսիլ այս տար-

[2] Հետագայում այդ անվանումն ամրագրվել ու տարածվել է հայ մատենագրության մեջ. այդ մասին տե՛ս Մ. ՊԱՊՅԱՆ, Հովհան Իմաստասեր Օձնեցի։ Կյանքը եւ գործունեությունը, Երեւան, 1998, էջ 8–22։

[3] Տե՛ս Ս. ՁԱՔԱՐՅԱՆ, Սուրբ Հովհան Օձնեցի. Իմաստասեր կաթողիկոսը, Երեւան, 2019, էջ 35։

բերը, որ, ամենայն հավանականությամբ, ունեն վիպական բնույթ եւ առնված են ժողովրդական բանավոր կամ եկեղեցական գրավոր ավանդապատումներից[4], Դրասխանակերտցին հիշատակում է անշուշտ դարձյալ նրան կատարյալ ներկայացնելու համար։

Վիպական է նաեւ Հովհան Օձնեցու տեսակցությունն արաբ ամիրապետի հետ, քանի որ այդ հանդիպումը եւս նկարագրվում է վիպական գծերով[5]։ Պատմվում է, որ Օձնեցուն՝ «Աստծու մարդուն», տեսնում է Վլիթ անունով մի ոստիկան, որն արաբ ամիրապետին պատմում է Օձնեցու վայելչության մասին, եւ ամիրապետը ցանկանում է տեսնել նրան։ Ըստ Դրասխանակերտցու պատումի՝ Օձնեցուն մեծ պատվով բերում են արքունական քաղաք։ Ամիրապետը նրան պատգամ է հղում, որ նա զգեստավորվի սովորական զարդարանքով, եւ ինքը նրան այդպես տեսնի։ Սակայն Օձնեցին, իր բարձրահասակ, թիկնավետ կերպարանքն առավել փայլուն զգեստներով զարդարելով եւ նոր ճերմակած մորուքը ոսկե ծաղիկների փնջի նման կազմելով ու ձեռքն առնելով ոսկենկար գավազանը, որ եբենոսյա փայտից էր, գալիս է ամիրապետի մոտ։ Վերջինս սկզբում հավանության չի արժանացնում Օձնեցու արտաքին շքեղությունը, եւ արաբ կառավարչի հարցմանը, թե «Ընդէ՞ր՝ ասէ, այդպէս պճնապաճոյճ լինիս. վասն զի Քրիստոսն ձեր զպարկեշտ եւ զչնչին զգեստ պատուեց եւ զնոյն արարին աշակերտք նորա» (էջ 106), Օձնեցին պատասխանում է. «Թէպէտ Քրիստոսի Աստուծոյ մերոյ առ ի մէնջ առեալ մարմնովն զաստուածական փառսն ծածկեալ լինէր իբրեւ վարագուրաւ. սակայն աստուածային զօրութեան սքանչելիք նշանացն ոչ ծածկեցաւ, այլ յամենեսին հեղաւ. զնոյն շնորհ նշանաց եւ արուեստից տալով ի ձեռս աշակերտացն իւրոց, որ բաւական բերէր զմիտս մարդկան զարթուցանել յերկիւղն Աստուծոյ՝ եւ ոչինչ պիտոյացան զգեստուց ահարկողաց։ Իսկ արդ վասն զի փակեալ է ի մէնջ բազում նշանաց նոցա շնորհ. վասն այնորիկ ահարկու իմն զգեստուք հնարիմք զպարզամիտ խակութիւն մարդկան ընդոստուցանել յերկիւղն Աստուծոյ։ Զայս ապա եւ ի մանրմնաւոր թագաւորսդ ի ձեզ է տեսանել. ծիրանեփառ եւ ոսկեճամուկ զգեստուք եւ գեղեցիկ զարդուք եւ զինուք առ ի յահարկութիւն բազմաց բերիլ։ Զի թէ խարազնազգեաց զձեզ ի մարդկանէ ոք տեսանի-

[4] *Տե՛ս Տ. Դալալյան, Հովհան Օձնեցու վիպական կերպարի համեմատական քննություն, ԼՀԳ, Երեւան, 2020, №2, էջ 182։*

[5] *Տե՛ս անդ, էջ 181։*

ցէ՝ եւ գծուծս եւ խոշորս, ոչ ոք պակուցեալ զարհուրեսցի ի փառաց ձերոց, որ ոչն երեւի» (էջ 106)։ Այս ասելով՝ Օձնեցին հանում է իր արտաքին զգեստները եւ ցույց տալիս այն այծամազե հաստ ու կոպիտ հագուստը, որ կրում էր տակից։ Սուրբ Հովհան Օձնեցու համեստ պահվածքն ու խոսքերն այնքան են ազդում ամիրապետի վրա, որ տիրակալը մեծարում ու պատիվների է արժանացնում նրան։

Ինչպես տեսնում ենք, Դրասխանակերտցին ոչինչ չի խնայել սուրբ Հովհան Օձնեցուն կատարելության լույսի տակ ներկայացնելու համար՝ նրան կենդանի ու տեսանելի երկխոսության միջոցով պատկերելով գործնական հարաբերություններում, որտեղ նա կերպարավորվում է որպես շրջահայաց անձնավորություն, որն առաջին հերթին մտածում էր հայության անվտանգության ու հոգեւոր ինքնուրույնության ապահովման մասին։

Գովելի կաթողիկոսների շարքը լրացնում է Տրդատ Ա. Ոթմսեցին, որի մասին թեեւ Դրասխանակերտցու խոսքը խիստ հակիրճ է, սակայն սեղմության մեջ անգամ ուրվագծվում է նրա կերպարը՝ որպես հոգատար, հայրենասեր հոգեւոր առաջնորդ. «...այր սուրբ եւ պարկեշտ եւ փայլեալ առաքինութեամբ,— նրա մասին գրում է պատմիչը։— Յաւուրս նորա ասպատակք չար հինից յամենայն ուստեք դադարեալ լինէին ի սադրելոյ սրբութեան աղօթից նորա» (էջ 108)։ Ինչպես տեսնում ենք, այս կաթողիկոսի անհատական հատկանիշներն ակնհայտորեն չեն ցուցադրվում գործողությունների եւ մարդկային հարաբերությունների մեջ. նա կերպավորվում է հեղինակային պատրաստի գնահատականներով, որ Դրասխանակերտցուն հատուկ կերպավորման սկզբունքներից մեկն է։

Հրաշագործ հատկանիշներով օժտված կերպար է նաեւ Սիոն Ա. Բավոնեցին, որը մանուկ հասակից սնվել ու կրթվել էր հայրապետարանում՝ հանդես բերելով բնական առաքինություն։ Մինչեւ հայրապետական աթոռին նստելը, երբ դեռ նա Աղձնյաց նահանգի հովիվն էր, պատմվում է, որ Սասունում՝ Սիմ լեռան ստորոտում, ցամաքում է մի հորդաբուխ աղբյուր, որը ոռոգում էր շրջակա բազմաթիվ այգիներն ու բուրաստանները։ Դրա հետեւանքով աղբյուրից օգտվող գյուղի բնակչությունը հայտնվում է ծանր կացության մեջ, քանի որ «սկսաւ ապականիլ եւ լքանիլ պտղաբերութիւնք գեղջն եւ յեղծումն աւերակաց բերիլ» (էջ 108)։ Կատարվածը խորապես հուզում է նահանգի ոստիկանին, որն իր մոտ է կանչում եպիսկոպոսին եւ աղաչում նրան մի հնար գտնել՝ աղբյուրը

դարձյալ բխեցնելու համար։ Վերջինս խորհուրդ է տալիս դիմել Աստծու զորությանը եւ մի կիրակի՝ արեւածագին, հավատացյալների խմբով շարժվում է դեպի ցամաքած աղբյուրը։ Այստեղ աղոթք անելով ու տեղը խաչակնքելով՝ նա ձեռքում բռնած գավազանով խփում է ակունքին եւ «յանկարծակի յական թօթափելն բղխէ աղբիւր վտակեալ յօրդաբուղխ ականակիտ պարզուածին» (էջ 110)։ Այս հրաշապատումը, որ ակնառու նմանություն ունի հրեաների Մովսեսի՝ գավազանով ապառաժը խոցելով՝ ջուր հոսեցնելուն (Ելք ԺԷ. 4–6) եւ հիշեցնում է նաեւ հայոց Ներսես Մեծ հայրապետի՝ աքսորի մեջ ամայի ու անջուր կղզում անուշ աղբյուր բխեցնելու պատմությունը[6], որ, ըստ Մ. Աբեղյանի, եկեղեցական զրույց է[7], հարկավ դարձյալ առնված է ավանդական պատմվածքներից կամ եկեղեցական ավանդապատումներից, որ պատմականացրել է Հովհաննես Դրասխանակերտցին՝ զարդարելու Սիոն հայրապետի կերպարը։

Բանահյուսական մտածողության երանգը որոշակիորեն զգալի է նաեւ Սիոն կաթողիկոսին հաջորդած Եսայի Ա. Եղիպատրուշեցու դեպքում, որը հայրապետական աթոռին նստում է հարազատ մոր մարգարեական կանխագուշակմամբ։ Այրի այս կինը, ինչպես Դրասխանակերտցու վկայությամբ պատմում են նրա մասին, աղքատության մեջ ընկնելու պատճառով, ծծկեր որդուն առած, շրջում է որպես մուրացիկ։ Գալիս-մտնում է Դվինի կաթողիկոսարան եւ համառորեն մնում Տիրոջ տաճարի դռանը՝ «ցրտահար սառուցեալ ի ձմերայնի լինէր եւ տապախարշ արեւակէզ յամարայնի» (էջ 110)։ Քահանաների հորդորներին՝ մտնել որեւէ հարկի տակ եւ ապաստան գտնել, որբեւայրին մերժելով պատասխանում է. «Ո՞չ գիտէք, զի սակս կաթողիկոսութեան զորդեակս իմ աստ սնուցանեմ» (էջ 110)։ Եւ իսկապես, կնոջ կանխատեսությունն իրականանում է։ Երեխան, հայրապետանոցում մեծանալով եւ կրթվելով, հետագայում է նախ արժանանում է եպիսկոպոսական պատվի, ապա հայրապետության բարձր պաշտոնի կոչվում։

Իհարկե, դժվար է ասել՝ տվյալ պատմությունն իրա՞կան է, թե՞ ոչ, ծագում է ավանդությունի՞ց, թե՞ ոչ։ Հետաքրքիրն ու կարեւորն այստեղ այն է, որ թեեւ Դրասխանակերտցին, այս հայրապետի վերաբերմամբ դրսեւորելով չեզոք-դրական վերաբերմունք եւ առանց որեւէ անհատա-

[6] Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երեւան, 1968, էջ 147։
[7] Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, Երեւան, 1968, էջ 194–195։

կանացման ընդամենն արձանագրելով, թե նա, առաքինի կյանք վարելով, աթոռին մնաց տասներեք տարի, մոր միջոցով արդեն համակրանքի երանգ է հաղորդում՝ կիրառելով կերպավորման մի նոր հնարանք։

Հաջորդ կաթողիկոսներից Սողոմոն Ա. Գառնեցու կապակցությամբ Դրասխանակերտցին մանրամասնում է մի պատմություն, որ դարձյալ հետաքրքիր է դարձնում հերոսին։ Սա «ի մանկութենէ առեալ էր զլուծ կրօնաւորութեան կարգի եւ բազում առաքինաջան երկոց զանձն տուեալ ի մեծ ուխտին Մաքենոցաց. այլ եւ վարժեալ իսկ էր ի փիլիսոփայական արուեստս եւ առաւել եւս հմուտ լեալ փսաղտութեան կրթանաց» (էջ 112)։ Երբ խիստ զառամյալ տարիքում հոժարակամ ընդունում է հայրապետական աթոռն զբաղեցնելու առաջարկը, իր մոտ՝ Շիրակ գավառի Զրեսկ գյուղ գնացած պատվիրակներից մեկի հարցին, թե ինչպես է, ծեր հասակում եւ սաստիկ ճգնավորությունից առողջությունը կորցրած, համաձայնում դառնալ կաթողիկոս, կատակի տալով պատասխանում է՝ գնում է, որպեսզի «գեղապաճոյճ նկարիչները» իրեն եւս մյուս հայրապետների նման սեւ ներկով պատկերեն եկեղեցու պատին, ինչը որ իսկապես կատարվում է (էջ 115)։

Հայրենասեր կաթողիկոսների շարքը շարունակում է Հովսեփ Բ. Փարպեցին, «որ Արագածոտն գաւառից էր»։ Դրական արտահատչաձեւերի կողքին («մեծ մարդ», «Աստծու մարդ») այս կերպարն ընդգծվում է նաեւ գործողությունների մեջ, որոնցում նա բացահայտվում է չարչարանքներից ու տանջանքներից չընկրկող կատարյալ նահատակ՝ պատրաստ իր երկրի համար զոհաբերելու կյանքը։

Այս հայրապետի օրոք արաբ մի ոստիկան՝ Խուզիմա անունով, ձգտելով մեր երկիրն ամբողջությամբ ընկճել, հպատակեցնել ու կեղեքել, իբրեւ թե «արծաթի գնով» փորձում է տիրանալ կաթողիկոսական դաստակերտներին ու ագարակներին։ Եւ երբ հանդիպում է կաթողիկոսի մերժմանը, եւ նրան համոզելու բոլոր հնարավոր եղանակներն սպառվում են, նա Հովսեփին բանտարկում է, որպեսզի թերեւս զարհուրելով տա իր պահանջածը։ Սակայն «նա ոչինչ վարկեալ զտանջանսն՝ եկեալս ի վերայ, եւ ոչ գրեալ ինչ զբրածեծն առնել՝ քաջապէս համբերէր՝ Աստուծոյ զայն ընծայելով» (էջ 114)։ Խուզիման, կատաղած այս ամենից, երեք տոպրակ գանձ է լցնում՝ մեջը դնելով հայրապետի ծառաների գլուխները, եւ հրապարակավ ցույց տալով՝ հրամայում մտնել նրա մոտ՝ բանտ, իբրեւ թե վճարեց։ Դրանից հետո դաժան ու ագահ ոստիկանը լուր է տարածում,

թե իբր իրեն են վաճառվել դաստակերտները, եւ բանտի կապանքներից ազատում է Հովսեփին։ Սակայն հայրապետը, առանց երկյուղ կրելու, դատարանում «բազում ջանք ու աշխատանք ցուցաբերելով», կարողանում է հայրապետանոցին վերադարձնել նրա հողերը՝ բացի Արտաշատից։ Հովհաննես Դրասխանակերտցու հավաստմամբ՝ նենգամիտ ոստիկանը, չար նախանձով վառված, վրեժխնդիր լինելու համար սպանում է Հովսեփի ավագ եղբորը։ Կարծում ենք՝ առերեւույթ գուցե ոչ այնքան կարեւոր այս փաստի վկայակոչման մեջ պատմիչը դարձյալ ձգտել է ցույց տալ ճշմարիտ հավատացյալի նվիրումն ու հերոսականությունը՝ այս անգամ նրա ապրած անձնական ողբերգությամբ համակրանքի նոր շեշտեր հաղորդելով իր հերոսին։

Հովհաննես Դրասխանակերտցին շոշափելի համակրանք ունի նաեւ Հովսեփին հաջորդող Հովհաննես Դ. Օվայեցի կաթողիկոսի նկատմամբ, որի կերպարն ավելի շատ ուրվագծվում է հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու հետ ունեցած հակադրության միջոցով։ Վերջինս, հավատալով հայրապետի վերաբերյալ «նենգաւոր լեզուով բամբասանքներին ու անօրէն խօսքերին», հրովարտակ է ուղղում բոլորին՝ հեռու մնալ նրանից, եւ մտադրվում է ինքնակամ կերպով կաթողիկոս նշանակել մեկ ուրիշի, մանավանդ որ արդեն սկզբից էլ համաձայն չէր եղել Հովհաննեսի հաստատմանը։ Լինելով դյուրազգաց մարդ՝ Հովհաննեսն ինքնակամ հեռանում է սուրբ Սահակի բնակատեղը (Այրիվանք կամ Գեղարդավանք), թաքնվում վանքի քարայրում՝ «լռելեայն զբաղուելով մշտնջենական աղօթքներով»։ Եւ միայն նախարարների ու հոգեւորականների գումարած եկեղեցական ժողովից հետո, երբ ցույց է տրվում նրա անմեղությունը եւ մեղադրանքների ստահոդությունը, «Աստծու մարդը» վերստին հաստատվում է սուրբ աթոռին, որ այնքան պատկերավոր նկարագրում է Դրասխանակերտցին՝ բացահայտ դրսեւորելով իր գորովը, ուրեմն եւ դիրքորոշումը նրա նկատմամբ[8]. «Իսկ ապա այնուհետեւ եկեղեցի Քրիստոսի, որ երբեմն խրթնացեալն էր ի վարատմանէ փեսային՝ դարձեալ յինքն զփեսայն առագաստաւոր նորոգապէս պայծառանայր» (էջ 118)։

[8] Թովմա Արծրունու գրքում Հովհաննես կաթողիկոսը դարձյալ ներկայացվում է որպես քրիստոնեական հավատով լեցուն, ճշմարիտ հավատի համար մարտնչող, իմաստուն, սկզբունքային եկեղեցական ու բարոյական բարեկարգությունների խնդիրներին նախանձախնդիր հոգեւորական-անհատ, որ շատերի համար տհաճ էր իր խստապահանջությամբ. տե՛ս Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Երեւան, 1985, էջ 182, 302։

Հովհաննես կաթողիկոսի հակառակորդներին տված խիստ բացասական որակումներից հետո Դրասխանակերտցին վիպական մանրամասներով պատմում է, թե ինչպես բանսարկուներն առհասարակ կոտորվում են «աստուածասաստ բարկութիւնից». մեկը, օրինակ, շուտով գահավիժում է բարձրավանդակ քարանձավից, ու քարաժայռերը նրա մարմինը կտոր-կտոր են անում, մյուսը գիշերով տանիքից է վայր ընկնում ու ջարդուխուրդ լինում, մեկ ուրիշն էլ խեղդվում է գետի արագահոս ջրերի մեջ, եւ նրան անգամ գերեզմանը չի ընդունում (էջ 120)։ Այս ամենը հեղինակային հնարանք է, թե՞ ոչ, դժվար է ասել, սակայն պարզ է, որ այսօրինակ հանգամանալից պատումային նկարագրություններով պատմիչը ցանկացել է արտահայտել իր աշխարհայացքային վերաբերմունքը հերոսի նկատմամբ՝ մեկ անգամ եւս հաստատելով այն միտքը, թե կատարյալ աստվածապաշտը միշտ գտնվում է Տիրոջ խնամակալության ներքո, եւ կպատժվեն բոլոր նրանք, ովքեր երբեւէ կփորձեն մեղանչել ճշմարտության դեմ։

Հովհաննես կաթողիկոսի կապակցությամբ հիշարժան է նաեւ այն, որ նա, ի հիշատակ արաբ զորապետ Բուղայի արշավանքի ժամանակ նահատակվածների, սահմանում է տարեկան տոն, որ «տարեւորական պատուով տօնէին զսոցա կատարումն ի Մեհեկի ամսեան, որ օր քսան եւ հինգ էր ամսոյն՝ ի փառս ամենակալին Աստուծոյ» (էջ 128)։

Դրասխանակերտցին ակնածանքով է խոսում նաեւ Զաքարիա Ա. Զագեցի հայրապետի մասին, որի ընտրությունը, ճիշտ է, տեղի է ունենում երկրի համար բավականին բարդ քաղաքական եւ ռազմական պայմաններում, սակայն նրա աթոռակալության ժամանակ է Բագրատունի Սմբատի որդի Աշոտը նախ կարգվում սպարապետ, ապա ամիրապետի հրամանով դառնում Հայոց իշխանաց իշխան՝ իր ձեռքում կենտրոնացնելով երկրի վարչական, ռազմական եւ տնտեսական իշխանությունը։ Ու եթե այդ ընթացքի համար Դրասխանակերտցին սողանցում է Զաքարիա հովվապետի գործադրած ջանքերը, ապա թերեւս սոսկ այն պատճառով, որ «ժամանակի պատմագիր» Շապուհ Բագրատունին արդեն բավականաչափ բացահայտ կերպով, թեպետ «ռամկական ոճով» արել էր «զրոյցս պայազատութեան որդւոյ Աշոտոյ սպարապետին Սմբատայ զիշխանական պատմութիւնն», եւ ինքը չի ցանկանում կրկնել բոլոր մանրամասները եւ բավարարվում է «պարզագոյնով ու չափաւորով» (էջ 134, 135)։ Սակայն որքան էլ կաթողիկոս-պատմիչը մնում է չափավոր, հայրապետին

տալիս պատրաստի գնահատականներ՝ նրա անվանը կցելով «սուրբ» եւ «մեծ» վերադիրները, այնուամենայնիվ Դվինին պատուհասած երկրաշարժի կապակցությամբ ակնառու է դարձնում նրա եկեղեցական նկարագիրը. «Իսկ սուրբ հայրապետն Զաքարիա ուժգին աղօթիւք եւ պաղատանօք մշտնջենամռունչ եւ աղերսալի աղօթս առ բարեգութն Աստուած մատուցանէր, եւ երկնային ազդեցութեամբն ի բաց բառնայր զաստուածասաստ բարկութիւնն՝ անվնաս զեկեղեցի Քրիստոսի պահեալ ի բազմաբեր ցասմանէ վտանգին» (էջ 136)։

Զաքարիա հայրապետի վախճանվելուց հետո հովվապետ է օծվում «Գեորգ անունով մի պատվական մարդ»՝ Գեւորգ Բ. Գառնեցին, որի աթոռակալության օրոք նվիրագործվեց մեր ժողովրդի մեծ երազանքը՝ ավելի քան չորսուկես դարի պետականազրկումից հետո Աշոտ Ա. Բագրատունու գահակալությամբ վերականգնվեց Հայոց թագավորությունը[9]։ Գեւորգ հայրապետի օրհնությամբ, ինչպես գրում է Դրասխանակերտցին, «փոխանակ օծման սրուակի իւղոյն՝ պսակեն զնա (Աշոտին.— Վ. Ա.) թագաւոր ի վերայ Ազքանազեան ազին» (էջ 142)։

Պատմիչի անմիջական գնահատման սկզբունքը գործում է նաեւ Գեւորգ հայրապետի կապակցությամբ. իր շարադրանքում ամեն անգամ նրա անվանը զուգակցում է «պատուական», «մեծ», «սուրբ» վերադիրները, մարդկային փոխհարաբերություններում բնութագրում «ազնիւ ու բարեբարոյ» բնավորություն ունեցող, եւ ապա, որ առավել ակնառու է դարձնում վերջինիս կերպարը, ծավալվող դեպքերի շղթայում նրա գործողությունների մանրամասների ցուցադրումն է։

Գեւորգ հայրապետի մեջ հոգեւորականն ու քաղաքական գործիչը լրացնում են իրար, որտեղ առանցքայինը հայրենյաց օգտակարության շեշտադրումն է։ Բոլոր այն դեպքերում, երբ, մասնավորապես Աշոտ արքայի մահվանից հետո, հայ իշխանները փորձում են իրար ձերբակալել եւ միմյանց դեմ պատերազմելով՝ ժառանգական տիրույթների ինչ-ինչ հարցեր լուծել՝ վտանգելով երկրի խաղաղությունն ու անվտանգությունը, Գեւորգ հայրապետը կանգնում է նրանց միջեւ, հանդես գալիս հաշտարարի դերում։ Ուրիշ բան, որ երբեմն նրան դա չի հաջողվում, որից, ինչպես Դրասխանակերտցին է գրում, նա տրտմում

---

[9] *Տե՛ս Ա. Մանուչարյան, Բագրատունիների թագավորության հաստատման թվականի վիմագրագիտական ճշգրտում, ԲԵՀ, 1995, №1, էջ 173–178։*

է, սրտի դառնությամբ հուզվում, ինչպես եղավ Սմբատ արքայորդու եւ Աբաս սպարապետի հակամարտության ժամանակ (էջ 148)։ Իսկ այն բանից հետո, երբ Գեւորգ հայրապետը թագադրում է Սմբատին, Աբասը չարությամբ ու նախանձով է լցվում կաթողիկոսի դեմ, նրա մասին բամբասանքներ հորինում եւ իր չար ու քսու համախոհների հետ ցանկանում իրագործել վերջինիս անկումը, որ չի հաջողվում։ Նախանձոտ զրպարտողների ու նեգավորների մի մասը պատժվում է՝ մեռնելով զանազան ախտերից ու մարմնական տարբեր կտտանքներից, որին ականատես է լինում նաեւ ինքը՝ Դրասխանակերտցին, իսկ մնացածները տագնապով թողություն են խնդրում կաթողիկոսից։ Եկեղեցական պատմիչն այդ պիղծ մարդկանց պատուհասումը պատճառաբանում է «ինչ-որ աստուածասաստ բարկութեամբ»։

Իր մեղանչական մոլորության համար ներում է հայցում եւ Աբաս սպարապետը՝ «բազմահառաչ պաղատանօք եւ արտասուօք անկեալ առ ոտս հայրապետին» (էջ 160)։ Կաթողիկոսի նկատմամբ համակրանքի շեշտերն ավելանում են նաեւ շնորհիվ նրա՝ զղջացած խառնակիչների ու բանսարկուների ներման, որով Դրասխանակերտցին հարկավ ցանկանում է ընդգծել կաթողիկոսի բարությունն ու գթասրտությունը։

Այս ամենից հետո խիստ տպավորիչ է դառնում Դրասխանակերտցու գաղափարական այն ընդհանրացումը, որը, որպես դաստիարակչական ուղերձ, հասցեագրվում է գալիք սերունդներին. «Եւ այսոքիկ մեծաւ երկիւղիւ առ ի յինէն գրով դրոշմեալ ձեզ եղեւ յիշատակ առ յապա. զի հայեցեալ յելս գնացից կորստականացն պատուհասից՝ մի՛ ոք զնոյն անցս չարչարանաց եւ զձաղանս եւ զձաղկանս խոխոտիցի կրել որպէս եւ նոքայն, որք ընդ Յուդայի անկեալք գնացին ի տեղիս իւրեանց» (էջ 160)։

Բերված հատվածը՝ սպառնալիքի իր ազդեցիկ շեշտադրումներով, հիշեցնում է Եղիշեի խոսքը՝ ասված դավաճան Վասակ Սյունու վերաբերյալ[10]. «Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն՝ որ զայս լուեալ գիտասցէ, նզովս ի հետ արկցէ, եւ մի՛ լիցի ցանկացող գործոց նորա»[11]։

---

[10] *Վաղուց է նկատվել, որ Հովհաննես Դրասխանակերտցին հաճախ է նմանել նախորդների լեզվին, ոճին, գործածել նրանց դարձվածները, մտածողության ձեւերը, պատկերները եւ այլն. տե՛ս, օրինակ,* Յ. Օշականն, *Յովհաննէս պատմաբան, Թ. դար, «Սիոն», Երուսաղէմ, 1929, թիւ 6, էջ 180–181,* Մ. Աբեղյան, *Երկեր, հտ. Գ, էջ 485,* Մ. Մկրտչյան, *Երկեր, հտ. 1, էջ 393,* Վ. Սաֆարյան, *Հայ միջնադարյան գրականություն, Երեւան, 2016, էջ 148–149։*

[11] Եղիշէ, *Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երեւան, 1989, էջ 282, 283։*

Գեւորգ հայրապետի կերպարի բանական վեհությունն ընդգծվում է նաեւ այն ժամանակ, երբ նա փորձում է կանխել «վշտասէր, չարասէր» Ափշին ոստիկանի հարձակումները՝ Սմբատ արքայի վրա։ Երկրի քաղաքական ճակատագրով եւ իր հոտի խնամքով մտահոգ հովվապետը սեփական նախաձեռնությամբ ստանձնում է միջնորդի դեր եւ գնում ոստիկանի մոտ՝ «փափկեցնելու նրա քարեղէն սիրտը»։ Սակայն շուտով իր «արդարամիտ ու ազնիւ սրտով» չհասկանալով ու չկռահելով «չարաբարոյ հեթանոսի» նենգությունները՝ ընկնում է նրա լարած թակարդը։ Մի տեսակ ասպետական վեհանձնություն կա այն դրվագում, երբ Գեւորգ հայրապետը, չանսալով թագավորի եւ իշխանների խորհրդին՝ Սմբատի մերժումից հետո չներկայանալ Ափշինին, վերադառնում է «իբր ոչ ստել զեղեալ ուխտն ընդ նմա» (էջ 172)։ Իսկ դաժան ոստիկանն անմիջապես շղթայել է տալիս կաթողիկոսին եւ անգամ այն բանից հետո, երբ սաստիկ պարտություն կրելով Սմբատից՝ հաշտություն է կնքում նրա հետ, հայրապետին չի արձակում, այլ տանում է իր հետ՝ նրան պատճառելով մարմնական բազմաթիվ նեղություններ ու անտանելի տառապանք, որ այնքան հոգեշարժ գույներով է պատմում Դրասխանակերտցին՝ ստեղծելով հոգեբանորեն սքանչելի ու բանաստեղծական բնավորություն. «...ոչ որոշեալ նմա սպասաւոր ձեռնասուն զոք, որ պատրաստէր նմա մահիճ, կամ ջուր ի ձեռս արկանել, կամ անձեռոցս մատուցանել, կամ սկուտղ առաջի դնել, կամ ջուր ըմպելոյ առ ի զծարաւ բժկել։ Եւ այսպէս ընդ սրբոց կապելոց չարչարեալ եւ արտասուօք միշտ թացեալ զանկողինս իւր՝ ի մշտնջենամռունչ սաղմոսս համակէր եւ անձանձրոյթ յաղօթս նահատակէր, միայն զի ոչ վրիպեսցի ի նաւահանգիստն կենաց հասանել» (էջ 172)։

Կաթողիկոսի՝ բանտում երկու ամիս մնալուց հետո միայն Ափշինը նրան ազատում է կապանքներից՝ ստանալով իր պահանջած փրկագինը, որը «արեւելից իշխան» Համամի հետ նրան է հասցնում Հովհաննես Դրասխանակերտցին, որն այդ ժամանակ կաթողիկոսական «դռան եպիսկոպոս» էր։ Վեհափառին դիմավորող բազմության խնդության նկարագրություններում տեսանելի է դառնում նրա մեծ ժողովրդայնությունը, որ մի լրացուցիչ երանգ է հաղորդում կերպարին։

Գեւորգ «մեծ հայրապետից» հետո, ինչպես Դրասխանակերտցին է գրում, թագավորը (Սմբատ Բագրատունին), ավագանին եւ այլ պատվական ազնվականներ կաթողիկոս են ընտրում «Աստծու մարդուն՝ ամբողջ էութեամբ հոգեւորական ու աստուածաշնորհ Մաշտոցին» (Մաշտոց Ա. Եղիվար-

դեցի, էջ 185), որի հռչակն ու համբավը՝ որպես սրբակրոն մարդու, վաղուց արդեն փայլատակելով փառավորվում էր երկրով մեկ։ Պատմիչի հավաստմամբ՝ Մաշտոցը եղել է իր ազգակիցը, որին մանկությունից ինքն աշակերտել է։ Գուցե ուսուցչի նկատմամբ երախտագգաց աշակերտի ակնածալից վերաբերմունքն է նաեւ պատճառը, որ Դրասխանակերտցին զգացմունքային այնպիսի պատկերավորությամբ է ներկայացնում Մաշտոց հայրապետին, որպիսին չի հանդիպում նախորդ հոգեւորականներից եւ ոչ մեկի առնչությամբ։

Պատմության շարադրանքում մենք Մաշտոցին հանդիպում ենք այն ժամանակ, երբ նա դեռ Սեւանա ուխտի առաջնորդն էր եւ «զփառացն Աստուծոյ անշիջանելի լուսոյ ճառագայթումնն յինքն նկարէր, աստուածային ծաւալմամբ եւ սրբափայլ կրօնիւք կենդանականօք եւ հոգիախաղաց զօրութեամբք ի տեսականի անդ զանտեսն տեսանէր» (էջ 150)։

Բացի սոսկ հեղինակային աստվածագեղ բնութագրումներից, սակայն, Մաշտոցի կերպարը բացահայտվում է նաեւ գործնականաբար։ Երբ Աբաս սպարապետը չի կարողանում նվաճել թագավորությունը, որի համար իբրեւ պատճառ տեսնում է նաեւ Սմբատին թագադրած Գեւորգ Գառնեցի կաթողիկոսին, չարությամբ ու նենգությամբ ցանկանում է «նրան սրի ճարակ դարձնել» եւ այդ չարամտությունն իրականացնելու համար ձգտում է իր կողմը գրավել Մաշտոց վարդապետին՝ հրապուրելով հայրապետական գահին նստեցնելու խոստմամբ։ Վերջինս, գուցե վտանգելով իր անձը, ոչ միայն չի պաշտպանում Աբասին, այլեւ զայրանալով՝ հանդիմանական բովանդակությամբ խիստ պատասխանով թուղթ է գրում իրեն հղած նամակին՝ հրաժարվելով մասնակցել արքայի դեմ ամբաստանությանը, նաեւ խորհուրդ է տալիս հեռու մնալ այդ մտադրությունից։

Այդ ընդարձակ թուղթը, որով Դրասխանակերտցին ուղղակիորեն ընդմիջարկում է Պատմության շարադրանքը, կարելի է ասել, հայ ճարտասանական մտքի փայլուն նմուշներից է, որ գրված է նամակի, ճառի, քարոզի տարրերի ներառմամբ եւ ունի նաեւ գեղարվեստական հնչեղություն։ Այն կերպավորում է նաեւ իր հեղինակին ու վերջինիս բնութագրումներով բացարձակացնում Գեւորգ Գառնեցուն։

Իր նպատակին հասնելու, հասցեատիրոջը համոզելու ու իր կողմը գրավելու համար Մաշտոցը հանդես է գալիս իբրեւ վարպետ թղթագիր-ճարտասան, որ կիրառում է նաեւ գրողական հնարքներ։

Մաշտոցը նամակն սկսում է շատ նրբամտորեն՝ թղթառաջում Աբասին դիմելով «Հզօրիդ» ձեւով, եւ ըստ Պողոսի՝ համարելով նրան սիրելի

եւ ոչ թե ատելի, որով կարծեք հարկադրում է հասցեատիրոջը բարեկամաբար ընդունել իր հորդորը։ Հետո նախապատրաստում է բուն ասելիքը՝ վկայելով, որ «աստուածային խօսքը մեզանից պահանջում է առաւել Աստծուն հնազանդուել, քան մարդկանց» (էջ 153)։ Սա նշանակում է, որ ինքը դրսեւորելու է քրիստոնեական պահվածք եւ շարժվելու է աստվածային օրենքներով՝ լինելով արդարադատ ու անկաշառ։ Այնուհետեւ ակնարկելով իրեն ուղղված նամակի պահանջը՝ խստորեն պարսավում է նամակագրին այն բանի համար, որ «չափը չգիտենալով»՝ զրպարտել է Գեւորգ կաթողիկոսին, իրեն էլ դեռ պատվիրել նզովել նրան։ Հակադրվելով Աբասին՝ Մաշտոցը փառաբանում է «մեծ հայրապետին եւ Քրիստոսի փոխանորդին», որ մանկությունից կատարյալ է եղել, եւ դատապարտում է իր անձը, որ նախկինում շեղվել ու դուրս է ընկել ճշմարիտ ուղուց[12]։ Իր խոսքին հաղորդելով ինքնադատանի ու տառապանքի շեշտեր՝ Մաշտոցն այնուհետեւ անկարելի է համարում, որ երբեւէ ինքը կհանդգնի հակադրվել «ընտրելոյն Աստուծոյ. ապա թէ ոչ՝ բացցէ երկիր բերան իւր եւ կլցէ զիս կորստեամբ... Իմն ա՛յդ է. եւ յայդմանէ զիս ոչ ոք կարէ փոխել ոչ գեհենին երկիւղիւ եւ արքայութեանն խոստմամբ...» (էջ 154)։

Եւ հիմա դիմում է Աբասին՝ աղաչելով հետեւել արդարությանը, չդատել սոսկ լսածով ու կարծելով, որովհետեւ «առն երեւելոյ եւ ի բարձրագոյն աստիճանի կացելոյ սակաւ ինչ սասանութիւնք՝ մեծամեծք են վնասք հասարակաց գայթակղութեան աղագաւ» (էջ 152)։ Իսկ հետո աստվածաբանության ու ճարտասանության մեջ հմուտ թղթագիրը, կիրառելով սեփական անձի նվաստացման նամակագրական կանոնը[13] («Բայց ես այր մեղաւոր եւ վատթար... Այլ իմ մեռիցի եւ կորիցէ անուն եւ յիշատակ յերեսաց երկրէ, եւ խաւարեսցին բիբք աչացս եւ մի տեսցեն զլոյս...» (էջ 152, 154), սուրբգրային բազմաթիվ քաղվածքներով ու նրանց մեկնություններով եւ համեմատություններով, փոխաբերություններով եւ ճարտասանական հնարքներով Աբասին խորհուրդ է տալիս հետեւել արդարությանը, չխաբվել, «խստութեամբ ընդդէմ խթանի աքացել» (էջ 156), որպեսզի, ինչպես ինքն է գրում, «առ հանդերձեալսն դատաստանք ձեր քաղցր եղիցին առաջի տիեզերական ատենին» (էջ 160)։

---

[12] *Այդ մասին տե՛ս Ե. ավ. քհն. Սարգսյան, նշ. աշխ, էջ 127։*

[13] *Տե՛ս* Ա. Ալեքսանյան, *Հայ միջնադարյան նամակը (*IV—XIV *դարեր), Երեւան, 2012, էջ 134։*

Այս նամակը, որ միտված էր Աբասին համոզելու հրաժարվել խարդավանքներից, տեսանելի է դարձնում ոչ միայն նրա հեղինակի գրական ճաշակը, ճարտասանական հմտությունները, այլեւ ցույց է տալիս նրա քաղաքական խորագիտությունը, սկզբունքային պահվածքը՝ ընդդեմ դավադրությունների, որը, անշուշտ, միայն անձնական դրդապատճառներից չէր ծագում, այլ եւս առավել ուներ ազգային բովանդակություն՝ կանխելու եղբայրասպան ներքին պատերազմները, օժանդակելու հայկական կենտրոնաձիգ պետականության ստեղծմանը։

Մաշտոցի ազգանվեր առաքելությունը ցուցադրվում-հաստատվում է նաեւ Դվնո երկրաշարժի զոհերին հասցեագրած մխիթարական թղթով (էջ 166, 168), որտեղ նա երեւում է պարզապես իբրեւ մարդ-հոգեբան. «Այս գրությունը,— գրում է Ա. Ալեքսանյանը,— քրիստոնեական աշխարհընկալմամբ հղացված մի պարզագույն ողբ է, որով նամակագիրը տուժածներին հորդորում է աղոթել առ Աստված եւ հույսը չկորցնել»[14]։

Ընդամենը յոթ ամիս զբաղեցնելով հայրապետական աթոռը՝ Մաշտոց կաթողիկոսը վախճանվում է, եւ կաթողիկոս է ընտրվում Հովհաննես Դրասխանակերտցին (էջ 186), որի գործունեությունն առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում, եւ որի կերպարը Պատմության մեջ առավել անհատականացված է ու կենդանի։ Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմիչի կերպարին առանձին անդրադառնալու առիթը արդեն ունեցել ենք[15], այստեղ, խուսափելով ավելորդ կրկնությունից, միայն ընդգծենք, որ Պատմության հոգեւոր դասի շարքը եզրափակող հեղինակ կաթողիկոսը մեզ ներկայանում է որպես քրիստոնեական հավատքի նվիրյալ եւ փառաբանիչ, գեղագիտական բարձր ճաշակ ու բարոյական վեհ ըմբռնումներ ունեցող պատմիչ-գիտնական, հայրենասեր ու ազգանվեր առաջադեմ մտածող, որի համար հայրենի երկրի ու ժողովրդի անկախությունն ու ազատությունը վեր են ամեն ինչից. «Երկրի ու իր անձի մեջ անընդհատ նկատվող վերելքներն ու վայրէջքները, որոնք հաստատումն են բարդ ժամանակների, պատմիչ-կաթողիկոսի մեջ ամրակայել են մեծ մարդասիրությունը...»[16],— գրում է Վ. Սաֆարյանը։

---

[14] Ա. Ալեքսանյան, *Հայ միջնադարյան նամակը....*, էջ 134։

[15] Տե՛ս Վ. Ավագյան, *Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին որպես եկեղեցական-պետական գործիչ եւ պատմիչ-գրող*, «Տարեգիրք. Աստվածաբանության ֆակուլտետ», Երեւան, 2014, էջ 282–294։

[16] Վ. Սաֆարյան, *Հայ միջնադարյան գրականություն*, էջ 153–154։

Այսպիսով՝ ուսումնասիրման առարկա ունենալով Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության մեջ ներկայացվող բազմաթիվ հոգեւորականներին՝ մենք մասնավորապես անդրադարձանք Զ.–Թ. դարերի հայ քրիստոնյա կրոնական դասի այն առաջնորդներին, որոնք մեր պատմության մեջ իրենց ունեցած դերով եւ բնավորության անհատական հատկանիշներով արժանացել են կաթողիկոս պատմիչի առավել մեծ ուշադրությանը։ Իսկ փոքր դրվագումներով հանդես եկող դեմքերը մեզ համար առավել հետաքրքիր էին՝ ավելի հաճախ շնորհիվ իրենց հետ կապված ինչ-ինչ զավեշտալի, հետաքրքրաշարժ պատմությունների ու զրույցների, որոնցում նրանք դրսեւորում են որոշակի խառնվածք եւ ուրվագծվում որպես գեղարվեստական հերոս։

Ամփոփելով կարող ենք ասել, որ Հովհաննես Դրասխանակերտցու՝ հոգեւոր հերոսների կերպավորման սկզբունքներն ու հնարքները տարբեր են. հիմնական եւ ամենից կիրառելի միջոցը, անշուշտ, գործողություններն են՝ անընդմեջ ծավալվող արտաքին ու ներքին կռիվների եւ պատերազմների մեջ նրանց՝ խաղաղություն եւ հաշտություն հաստատելու համար կատարած դերի, յուրայինների ու օտարների հետ ունեցած փոխհարաբերությունների նկարագրությամբ, ինչպես նաեւ նրանց մասին վիպական, հրաշապատում պատմությունների եւ եկեղեցական զրույցների կամ ավանդապատումների մատուցմամբ։ Երբեմն հերոսի դիմանկարը հարստացնելու համար պատմիչը գործածում է նաեւ կենդանի երկխոսությունը, հազվադեպ՝ նամակը, եզակի դեպքերում՝ ինքնաբնութագիրը եւ ուրիշի տված բնորոշումը։ Թերեւս պայմանավորված նրանով, որ էականը մարմնի մեջ պարփակված ոգու բացահայտումն է, բացառիկ է հերոսին արտաքին նկարագրով ներկայացնելու հեղինակային սկզբունքը։ Մինչդեռ գրեթե բոլոր հերոսների կերպավորման մեջ կարեւոր եւ մշտական տեղ է զբաղեցնում Դրասխանակերտցու հեղինակային պատրաստի անմիջական բնութագիր-գնահատականը, որով նաեւ որոշակի վերաբերմունք է ստեղծվում հերոսի նկատմամբ։

Կերպարակերտման սկզբունք կամ հնարք պետք է դիտարկել նաեւ այն չեզոք դիրքորոշումը, որով հաճախ հանդես է գալիս Դրասխանակերտցին այս կամ այն կաթողիկոսի կապակցությամբ՝ անգամ առանց չափավոր գնահատման՝ բավարարվելով սոսկ նրա աթոռակալության ժամանակահատվածի հիշատակմամբ։

Վերջում նկատենք, որ Հովհաննես Դրասխանակերտցին՝ իբրեւ քրիստոնեական բարոյականությամբ առաջնորդվող հայրենասեր անհատ, մեծագույն սիրով ու ակնածանքով է խոսում հատկապես այն հոգեւորականների մասին, որոնք եղել են ազգանվեր գործիչներ, մարտնչել են կրոնական անկախության, հոգեւոր ինքնուրույնության ապահովման, հարազատ ժողովրդի խաղաղության ու անվտանգության համար՝ պատրաստ անգամ սեփական կյանքը զոհաբերելու։ Նրանց արարքների ու գործերի թվարկումով պատմիչը ոչ միայն ձգտել է ամբողջացնել վերջիններիս դիմանկարը, այլեւ սերունդներին ցույց տալ իսկական քրիստոնյա հոգեւորականին հատուկ արժանիքները՝ աստվածապաշտությունը, ուղղափառությունը, խոհեմությունը, բարությունը, երախտագիտությունը, իմաստությունը, հանդուրժողականությունը։

РЕЗЮМЕ

В статье исследуются образы почти всех духовных деятелей, о которых упоминает в своей «Истории Армении» известный армянский Католикос, историк X века Ованес Драсханакертци. Духовные деятели жили в VI—IX веках и удостоились внимания историка своей деятельностью. Выявляя их сословные и личные качества, автор статьи также указывает принципы и приемы создания историком каждого образа, частоту использования этих принципов в разнообразии изображения раскрывает сходства и различия образов.

SUMMARY

The article studies images of almost all religious figures portrayed in the “History of Armenia” by the famous Armenian Catholicos, historian of the 10th century Hovhannes of Draskhanakert. They lived from the 6th to the 9th centuries and became worthy of the attention of the historian for their works. Revealing their class and personal qualities, the author of the article also indicates the principles and techniques for creating each character, the frequency of their use, thus revealing the similarities and differences of characters in the variety of images.